
ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ. ԱԶԳԱՅԻՆ - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ
(Ծննդյան 140-ամյակի առթիվ)

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ



Հայ նշանավոր գրող, թարգմանիչ, հրապարակագիր, “հայոց մեծագույն գրագիտուհի” (Ա. Չոպանյան), ազգային-հասարակական անվանի գործիչ Զապել Մկրտչի Եսայանը (Հովհաննիսյան) ծնվել է 1878 թ. Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում: Նախ ուսանել է մասնավոր դպրոցում, ապա սովորել ու ավարտել է Սկյուտարի Սուրբ Խաչ վարժարանը: 1892 թ. մեկ տարի աշակերտել է Ա. Չոպանյանին: 1895 թ. ղեկտեմբերին մեկնել է Փարիզ, որտեղ մասնակցել է Լուսինյանի բառարանի կազմմանը իբրև խմբագիր-սրբագրիչ, ունկնդրել Սորբոնի համալսարանի և Կոլեջ դը Ֆրանսի դասընթացները (գրականության ու փիլիսոփայության ճյուղերը): 1900 թ. Զապելն ամուսնացել է նկարիչ Տիգրան Եսայանի (1874–1921) հետ: Փարիզում աշխատակցել է հայկական և ֆրանսիական պարբերականների, հայերեն ու ֆրանսերեն լեզուներով գրել է բազմաթիվ հոդվածներ, արձակ քերթվածներ, պատմվածքներ, վիպակներ, կատարել թարգմանություններ: Ֆրանսիական ու արևմտաեվրոպական, ռուս մշակույթի և գրականության, անտիկ աշխարհի արվեստի քաջ գիտակ, գրական հասարակայնության կողմից ճանաչված ու սիրված Զ. Եսայանը 1902 թ. վերադարձել է Կ. Պոլիս և շարունակել ստեղծագործական, գրական-հասարակական բեղմնավոր գործունեությունը: 1905 թ.՝ սուլթան

¹ Զ. Եսայանի կյանքի, գործունեության և գրական հարուստ ժառանգության մասին մանրամասն տե՛ս Մ. Արզումանյան. Զապել Եսայան (Կյանքը և գործը), Երևան, 1965, նույնի՝ Զապել Եսայան.– Զ. Եսայան. Նամակներ (Կազմեց և ծանոթագրեց՝ Ա. Ավետիսյան, խմբագիր՝ Մ. Արզումանյան), Երևան, 1977, էջ 9–22, նույնի՝ Զապել Եսայան.– “Հայ նոր գրականության պատմություն”, հ. 5, Երևան, 1979, էջ 785–802, Դ. Գաւապարյան. Փակ դռների գաղտնիքը (Չարենցը, Բակունցը և մյուսները), Երևան, 1994, էջ 89–112, Մ. Ս. Գրիգորյան. Զապել Եսայանի փոքր կտավի ստեղծագործությունները: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 1990 և այլն:

Աբդուլ Համիդի դեմ կատարված մահափորձից հետո, սկսվում է սոցիալական, ազգային-քաղաքական ճնշման, հալածանքների շրջան, և նա ստիպված մեկնում է Փարիզ ու այնտեղ ապրում մինչև 1908 թ.՝ օսմանյան սահմանադրության հռչակումը: 1905–1907 թթ. Զ. Եսայանը հրատարակում է «Սկյուտարի վերջալույսներ», «Կեղծ հանճարները», «Հլուները և ըմբոստները» ու «Շնորհքով մարդիկ» վիպակները:

1909 թ. ապրիլին երիտթուրքերն Ադանայում կազմակերպում են հայերի կոտորած, որին զոհ է գնում շուրջ 30.000 մարդ: Հայ մտավորականներից, գրողներից ու գործիչներից կազմվում են պատվիրակություններ, որոնք մեկնում են ադեմի վայրերը: Նրանց թվում էր նաև Զ. Եսայանը, ով շուրջ երեք ամիս լինում է Ադանա, Մերսին, Միս, Օսմանիե և այլ բնակավայրերում, լսում կոտորածների ականատես մարդկանց, գրում հոդվածներ, գեղարվեստական մի շարք գործեր: Կիլիկիայի հայության մեծ ողբերգությունը, մասնավորապես, նկարագրել է «Ավերակներուն մեջ» գրքում, «Անեծքը» վիպակում, «Նոր հարսը» և «Մաֆիե» պատմվածքներում, որոնք բոլորն էլ հրատարակել է 1911 թ.:

Զ. Եսայանը 1910 թ. մեկնել է Փարիզ: Հոր ծանր հիվանդության պատճառով 1911-ին վերադարձել է ծննդավայր, այնտեղ մնացել մինչև 1914 թ. մայիսը: Այնուհետև կրկին մեկնել է Փարիզ, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին վերադարձել է Կ. Պոլիս: 1914 թ. այստեղ հրատարակվում է արձակագրուհու «Երբ այլևս չեն սիրեր» ժողովածուն:

1915 թ. ապրիլի 24-ի գիշերն արքայի ենթակա հայ մտավորականներից միակ կինը, ում անունը գրված է եղել նախապես կազմված ցուցակում, Զ. Եսայանն է: Դիպվածով մազապուրծ Հայոց ցեղասպանությունից՝ շուրջ երեք ամիս փախստականի կյանք է վարել, ապա մեկնել է Բուլղարիա, Ռումինիա, իսկ 1915 թ. վերջին՝ եկել Կովկաս: «Վերջին ամիսներս Թիֆլիսում է գտնվում Կ. Պոլսից մեզ մօտ «ակամայ» հիւր եկած տիկ. Զ. Եսայեան: Թիւրք կառավարութեան հալածանքներից ու հետապնդումներից, ինչպէս յայտնի է, պոլսահայ մտաւորականութիւնն աւելի ևս տուժեց մահի և արքայի, բանտի և կապանքների ենթարկվելով, – կարդում ենք «Մշակ» թերթում:– Տազնապի այդ օրերին ահա տ. Եսայեանին աջողվում է մի քանի հայ ընտանիքների հետ դուրս պրծնել տանջանքների երկրից և Բուլղարիայի, Ռումինիայի վրայով գալ հասնել Թիֆլիս»²: Այնուհետև թերթը կենսագրական որոշ տեղեկություններ է հաղորդում, որը, կարծում ենք, տեղին է մեջբերել ամբողջությամբ. «Տիկ. Զապել Եսայեան թիւրքահայ կամ լաւ է ասել պոլսահայ նորագոյն գրականութեան անուանի դէմքերից մէկն է: Երկու

² «Մշակ» (Թիֆլիս), 6. II. 1916: Տե՛ս նաև՝ «Русские ведомости» (Москва), 22. IV. 1916; «Армянский вестник» (Москва), 1916, № 15, с. 12–14.

տասնեակ տարի է՝ նրա պատմուածքները, մանրավէպերը տպագրվում են թիրքահայ համարեա բոլոր թերթերում: Առաջին անգամ Զօպանեանի «Ծաղիկ» հանդէսի մէջ տպագրվեց տ. Եսայեանի մի արձակ բանաստեղծութիւն, երբ հեղինակը 17 տարեկան մի դեռատի օրիորդ էր: Այնուհետև մինչև 1902 թիւը Զապել Եսայեան ապրել է Պարիզում, որպէս գրականութեան ուսանողուհի, և ապա վերադառնալով Կ. Պոլիս նուիրվել է գեղեցիկ գրականութեան: Միմեանց ետևից լոյս ընծայելով իր «Մպասման սրահին մէջ», «Կեղծ հանճարները», «Հլուները և ըմբոստները», «Շնորհքով մարդիկ» վէպերն ու վիպակները՝ հեղինակը իր վրա դարձրեց մտաւոր շրջանների և քննադատների միաժամանակ թէ հիացումները և թէ յարձակումները, մանավանդ «Շնորհքով մարդիկ» վէպի մէջ արտայայտված գաղափարների համար:

Ադանայի սարսափների դադարումից վերջը, տ. Զ. Եսայեան գնաց Կիլիկիա, անձամբ տեսնելու և գաղափար կազմելու այն անսահման թշուառութիւնների մասին, որոնց ենթակայ էր եղել տեղական հայ ժողովուրդը: Տիկնոջ այդ ճամբորդութեան արդիւնքն եղավ նրա «Աւերակներուն մէջ» վերնագիրը կրող շահեկան գործը, որի մէջ գեղարուեստօրէն և սիրուն ոճով նկարագրված են դէպքերն ու դէմքերը Կիլիկիայի մեծ սարսափների³:

Անդրկովկասում՝ Բաքվում ու Թիֆլիսում, Զ. Եսայանը լայնորէն շփվել է հայ հասարակայնության հետ, հանդես է եկել արևմտահայ գրողների և գրականության, արևմտահայության նկատմամբ կիրառվող հալածանքների շուրջ գեղուցումներով ու դասախոսություններով, գրել է հոդվածներ: Այսպէս, 1916 թ. փետրվարի 6-ին Թիֆլիսի քաղաքային ժողովարանի դահլիճում՝ Հովհ. Թումանյանի նախագահությամբ, դասախոսություն է կարդացել «Հայկական վերջին հալածանքները Կ. Պոլսո մէջ» վերնագրով, իսկ մարտի 12-ին Բաքվում՝ «Հայ գրասերների ընկերության» հրավերով Հասարակական ժողովարանում՝ Հովհ. Հովհաննիսյանի նախագահությամբ, ժամանակակից արևմտահայ գրականության և գրողների մասին⁴: Այնուհետև Մոսկվայի Հայկական կոմիտէի

³ «Մշակ», 6. II. 1916:

⁴ Տե՛ս նոյն տեղում, նաև՝ «Հորիզոն» (Թիֆլիս), 31. III. 1916, «Армянский вестник», 1916, № 4, с. 22; № 8, с. 21. Ի դեպ, «Մշակ» թերթը, անդրադառնալով «Հայկական վերջին հալածանքները Կ. Պոլսո մէջ» վերնագրով դասախոսությանը, մասնավորապէս գրում է. «Տիկին Եսայեանը, ինչպէս և ամեն մի թիրքահայ գրականագէտ, իր մաքուր հայերէնով, ախորժալուր առողանութեամբ և նոյն իսկ ճարտասանութեամբ հաճելի տպաւորութիւն է թողնում: Դասախոսութեան այդ արտաքին հանգամանքները շատ նպաստաւոր են և իստում են յօգուտ դասախօսի: Սակայն նոյնը չենք կարող ասել՝ դասախօսութեան ներքին յատկութիւնների և արժանիքի մասին. իսկ այն միակողմանիութիւնը, ես աւելին կասեմ՝ ոչ թէ կուսակցական խտրական ոգին, այլ նոյն

հրավերով Ձ. Եսայանը մեկնում է Պետրոգրադ և Մոսկվա, որտեղ կազմակերպում է հայ որբերի ու գաղթականների օգտին կատարվելիք հանգանակության գործը և ներկայացնում հայկական կոտորածների իրական պատկերը: Ապրիլի 4-ին Պետրոգրադում նա հանդես է գալիս դասախոսությամբ: Այդ մասին “Արև” թերթում՝ “Զապել Եսայանի դասախոսությունը Պետրոգրադում” վերնագրի տակ, կարդում ենք. “... տաճկահայ տաղանդաւոր գրագիտուհի տիկին Զապել Եսայեան տուել է մի շատ հետաքրքիր դասախօսութիւն մայրաքաղաքի մի շարք գրական և քաղաքական յայտնի գործիչներու (ներկա են եղել պետական խորհրդի անդամներ, դեսպանատների ներկայացուցիչներ, երեսփոխաններ, այդ թվում՝ Միլյուկովը, Բըքսթընը, Պապաջանյանը. – Ա. Ձ.) ներկայութեան: Հրահրուելով մայրաքաղաք իր վաղեմի ծանօթ ռուս գրագիտուհի տիկ. Թըրկովայի կողմէ (բնակվել է վերջինիս տանը. – Ա. Ձ.) ... այստեղ կկազմակերպուի մի երեկոյթ, ուր մեր շնորհալի գրագիտուհին ֆրանսերէն լեզուով կըխօսի մի դասախօսութիւն, տալով ամփոփ պատկերը այն բոլոր հալածանքներու, որոնց կենթարկուեն Պօլսոյ և ընդհանրապէս Տաճկաստանի հայերը ... Նոյն նիւթի մասին տիկին Եսայեան հայ լեզուով կը դասախօսէ հայկական ակումբին մէջ, իսկ Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ կը դասախօսէ թիւրքահայ գրականութեան մասին (ապրիլի 20-ին՝ Մոսկվայի հայկական կոմիտեում, 21-ին՝ Լազարյան ճեմարանում. – Ա. Ձ.)”⁵:

իսկ “կուսակցական ցուազարութիւնը” (ինչպէս շատ ճիշդ արտայայտվել է “Վան – Տոսպ” թերթը) վերին աստիճանի աննպաստ և անհաճոյ տպաւորութիւն թողեցին մեզ վրա, և մենք անկեղծ ցաւ զգացինք, որ տ. Զապել Եսայեանը, գալով Կ. Պօլսից մեզ մօտ, համազգային այս մեծ և ահռելի աղէտի օրերին, հարկ է տեսնել մի դասախօսութեան մէջ, որ կրում էր ընդհանուր բնաւորութիւն, սահմանված էր մի հասարակական, անկուսակցական լսարանի համար, ցոյց տալ խտրական, կուսակցական ոգի: Դա վայել չէ ոչ կնոջ, ոչ գրողին և մանաւանդ վիպասանին” (“Մշակ”, 9. II. 1916):

⁵ “Արև” (Բաքու), 16. VII. 1916: Տե՛ս նաև “Армянский вестник”, 1916, № 12 – 13, с. 45. Ի դեպ, հաղորդագրության մեջ հիշատակվող “ռուս գրագիտուհի տիկ. Թըրկովայն” ժամանակի հայ հասարակությանը քաջածանոթ Արիադնա Տիրկովան է (Ա. Վերգեժուկի): Նա ճանաչված գրական-հասարակական գործիչ էր, ռուսական կենտրոնական թերթերի թղթակից: Կովկասյան ռազմաճակատից վերադառնալով՝ 1915 թ. նոյեմբերի 5-ին Հասարակական ակումբի նախաձեռնությամբ Թիֆլիսի կայսերական երաժշտական դպրոցի դահլիճում զեկուցում է կարդացել “Պատերազմը և կինը” թեմայով, միաժամանակ տպավորություններ պատմել ռազմաճակատից: 1916 թ. Պետրոգրադում լույս է տեսել նրա “Հին Թուրքիան և երիտթուրքերը: Մեկ տարի Կոստանդնուպոլսում” վերնագրով ուշագրավ գիրքը: Այստեղ հայերին նվիրված է առանձին գլուխ, որտեղ արտահայտված է հեղինակի սերն ու հարգանքը հայ ժողովրդի նկատմամբ: Հատկապես ջերմ է խոսում Թուրքիայում Հայ հեղափոխական դաշնակցության գործունեության

1916 թ. կեսերից 1918 թ. կեսերը Չ. Եսայանն ամբողջովին նվիրվել է հայկական կոտորածների մասին վկայություններ կամ փաստագրական նյութեր հավաքելու, արձանագրելու և հրատարակելու գործին: Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ կան տարբեր անձանց գրած նրա նամակներում: Այսպես, 1916 թ. նոյեմբերի 25-ին Բաքվից Փարիզ՝ Ա. Չոպանյանին գրած նամակում Չ. Եսայանը հետաքրքրվում է. «Կուզեի Ձեզ հարցնել նաև, թե արդյոք որևէ օգտակարություն կունենա, եթե դրկեմ Բարիզ «Մուրատի հիշողությունները» և Միջազգետքի հայության մասին տպավորություններ, որոնք քաղեցի ականատեսի մը հիշողություններեն: Մուրատի գործը մոտերս կը տպագրվի Բագուի մեջ և ես Ձեզ կը դրկեմ տպագրվածը, իսկ երկրորդ աշխատությունս տակավին չէ ավարտած և եթե հարկ տեսնեք, կը դրկեմ անմիջապես հետաքրքրական էջեր»⁶:

1917 թ. հունվարի 23-ին Թիֆլիսից Բաքու՝ իրավաբան, գրական-հասարակական գործիչ, Բաքվի հայ գրողների հրատարակչական ընկերության նախագահ, «Գործ» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագրի հրատարակիչ Երվանդ Թադիանոսյանին (ամսագիրը լույս է տեսել 1917 թ. հունվարի 1-ից 1918 թ. կեսերը, խմբագիրն էր Կոստանդին Կրասիլնիկյանը) Չ. Եսայանը գրում է. «Շնորհակալությամբ ստացա «Միջազգետք»-ի տպագրված էջերը: Պ. Տեր-Անդրեասյանցի մեկնած օրը խնդրեցի իրմեն, որ Ձեզ հայտնե, թե նոր դրկած ձեռագիրներուս 30-րդ էջեն մինչև վերջը ընդօրինակել տաք մեկու մը և դրկեք, եթե անհնար չէ. ես կը շտապեմ ռուսերենի թարգմանության համար, որ կարող է ինքնին բավական երկար տևել»:

«Միջազգետք»-ի վերջին էջերը կավարտեմ վաղը կամ մյուս օր, բայց ինչպես գիտեք չեմ կարող ունե մարդու հետ դրկել. եթե անկարելի չըլլա, ես ինքս կը բերեմ փետրվարի առաջին օրերուն և 2 – 3 օր գոնե կը մնամ Բաքու: Այս պահուս շատ ծանրաբեռնված եմ աշխատություններով և առողջությունս ալ շատ հաստատ չէ, բայց հույս ունեմ, որ հառաջիկա շաբթուն մեջ ավելի ազատ կըլլամ»⁸:

մասին: Անդրադարձ կա հայերի կոտորածներին: Ամենայն հավանականությամբ, Չ. Եսայանն ու Ա. Տիրկովան հենց Կ. Պոլսում էլ ծանոթացել, մտերմացել են (մանրամասն տե՛ս Ա. Закарян. Трагедия армянского народа в оценке русских литераторов. Ереван, 2003, с. 75–76):

⁶ Չ. Եսայան. Նամակներ, էջ 138:

⁷ Հուշագրությունը ռուսերեն թարգմանությամբ [«Агония одного народа (Выселенные армяне в Месопотамии)». Запись г-жи Забэль Есяян. Перевод с армянского – С. А.)] տպագրվել է Բաքվում լույս տեսնող «Наше время» թերթի 1919 թ. ապրիլ-օգոստոսյան համարներում:

⁸ Չ. Եսայան. Նամակներ, էջ 138–139:

Եվ ահա, “Գործ” ամսագրի 1917 թ. 2-րդ (էջ 79–139) և 3-րդ (էջ 40–99) համարներում տպագրվում է Չ. Եսայանի “Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)” վերնագրով ծավալուն նյութը: Պատմություն, որը նա լսելու գրի է առել Միջագետքի անապատներ քշված հայ ժողովրդի մի սովոր հատվածի ողբերգական վախճանի ականատես-վկա Հայկ Թորոյանից: Հայերի կանխամտածված ցեղասպանության մի դրվագը լուսաբանող այս աշխատանքը պատմական-փաստական եզակի արժեք ունի (Չ. Եսայանը դեպքերը նկարագրում է ականատեսի՝ առաջին դեմքով), քանզի դրա պատմողն է “Միակ հայ մը, որ իր աչալրջութեան և հաստատականութեան շնորհիւ, անցնելով արքայի այդ դժնդակ ճամբաներէն, հասած է մեզի վկայելու և աւանդելու այն հեծեծանքը, որ մենքնէլէ առաջ ամբողջ ժողովուրդ մը արձակած է Միջագետքի անապատներէն”⁹, – գրում է Չ. Եսայանը: “Դիպուածի արդիւնք չէ կամ սովորական առաքիներսններ և յատկութիւններ բաւական չէին, որ այդ միակ հայը կարենար իր դերը կատարել, – շարունակում է նա, – անիկա զգացած է, որ սրբազան պարտք մը ունի և այդ զգացումով տոգորված՝ մօտիկցած է բոլոր ցան ու ցրիվ խումբերուն, լսած է տառապանքի բոլոր ձայները, տեսած է զարհուրելի բոլոր անպատմելի պատկերներուն, և անցնելով հայու մը համար անանցանելի թրքական սահմանէն, հասած է մեզի, բերելով իր հետ վերջին աղաղակը անպատմելի արհաւիրքներուն մէջ չքացող ժողովուրդի մը”¹⁰: Փաստավավերագրական արժեք ունեցող այս “արձանագրությունները”՝ հայկական կոտորածների, տեղահանության ու արքայի ողբերգական պատկերները, ինչպես նշում է Չ. Եսայանը, “գեր ի վեր կը մնայ ամենէն դժոխային երևակայութենէ”¹¹:

Վավերագրական պատումն ունի ցնցող տեսարաններ, որոնք թուրքերի զազանությունները հաստատող աներկբա փաստաթուղթ են: Պատումի դեպքերը սահմոկեցուցիչ դաժանության բազմաթիվ դրվագներ են պարունակում: Նկարագրվում է Միջագետք արքայոված հայերի վիճակը, ցույց է տրվում, թե ինչպես է կատարվել հայերի տեղահանությունն ու բնաջնջումը, ովքեր են դրան մասնակցել և ինչ հրահանգներով: Այն սկսում է Տիգրանակերտի հայերի դեմ տնտեսական բռնկոտից, ապա 1914 թ. նոյեմբերին քաղաքի շուկայի հրդեհումից, և ընդգրկում է շուրջ երկու տարվա (մինչև 1916 թ. փետրվարի վերջը) իրադարձություն: Դրանով, փաստորեն, ժամանակագրական կարգով վերականգնվում է դեպի Միջագետք բռնագաղթի ու ցեղասպանության իրագործման ողջ ընթացքը, և, ըստ այդմ, հուշագրությունն անառարկելի ներդրում է Հայոց

⁹ “Գործ” (Բաքու), 1917, -2, էջ 79:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 80:

ցեղասպանության պատմության համակողմանի ուսումնասիրման ու լուսաբանման ասպարեզում:

Հայտնի իրողություն է, որ, օգտվելով Առաջին աշխարհամարտի սկսվելուց, երիտթուրքերի կառավարությունը կազմակերպեց 18–45 տարեկան հայ տղամարդկանց թուրքական բանակ գորակոչը, ծերունիները, կանայք և երեխաները մնացին անպաշտպան, երկրի ողջ տարածքով ծայր առան հայերի ձերբակալություններ, դրան հետևեց մտավորականության սպանդը, ապա իրագործվեց Արևմտահայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայության բռնի տեղահանությունն ու զանգվածային կոտորածը: Խիստ տպավորիչ է հատկապես Ջեթունի դավադրաբար հայաթափումը: Ընթերցողի աչքի առաջ անցնում են Հաճրնի, Այնթապի, Մարաշի, Ադանայի, Մերսինի, Սսի, Եդեսիայի և հայաբնակ մյուս ծաղկուն վայրերի ամայացումն ու բնակչության կոտորածները: Խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով ապրող, ունևոր և բարեկեցիկ կյանք վարող, դպրոցներ ու քոլեջներ ավարտած հայությունը ենթարկվում է դահիճների՝ բնտերից ազատված հանցագործ-մարդասպանների և դաժան ու անգութ ժանդարմների ատելությանը, հայհոյանքներին, զվարճանքին, քմահաճույքին և անարգանքին:

Հուզիչ պատումներից մեկը կապվում է այն տեսարանի հետ, որում նկարագրված է, թե ինչպես է «գայմագամ պեյր» արքայականների հոծ զանգվածի մեջ իր անասնական կրքերի համար գեղեցիկ մանուկներ փնտրում: Ապա՝ մի թուրք 70 մանուկների լցնում է մակույկը և սառնասրտորեն խեղդամահ անում Եփրատի ջրերում: Նման հոգեցունց բազմաթիվ դեպքերը շարունակ շրջանառվում են պատումի տարբեր օրերի դրվագներում:

Հարյուր հազարավոր բռնի տեղահանված հայերի հոծ թափորները՝ անզեն և անօգնական ծերունիներ ու կանայք, հղի մայրեր և ծնկեր մանուկներ, դեռատի աղջիկներ, գաղթականության ցուպը ձեռքներին, թուրք ժանդարմների և վարձու հրոսակախմբերի մտրակների տարափի տակ, Միջագետքի թեժ արևի ներքո, սոված ու ծարավ, պայքարելով բնության աննպաստ պայմանների դեմ, արյունոտված ոտքերով, ճանապարհին իրենց հարազատներին անթաղ թողնելով՝ քայլեցին շատ երկար, անձայրածիր, անմարդաբնակ անապատներով մինչև հայության մեծ ու բաց գերեզմանոցները՝ Սուրուճի դաշտ, Ռաս ուլ Այն, Ռաքքա, Դեյր էզ-Չոր, դեպի անհայտ հեռուները... Հոգեբան-գրող Ջ. Եսայանը գեղարվեստորեն ցնցող մանրամասնություններով նկարագրել է արքայականների ոչ միայն ողբերգական վիճակը, մահվան ճամբարները և սահմոկեցուցիչ այն պայմանները, որոնցում նրանք գոյություն են քարշ սովել, այլև հոգեբանական նուրբ վերլուծություններով թափանցել է բռնի տեղահանվածների հոգու խորքերը, բացահայտել նրանց լուռ, անմեկնելի և անհամար տառապանքները, հուսակտուր

հեծեծանքները, զգացածն ու արտահայտել չկարողացածը... Չանգվածային սպանդի տարեգրության մեջ տեսնում ենք թուրք գայմագամների, փաշաների, արաբ շեյխի, եվրոպացի ականատեսների: Մասնավորապես, անչափ հուզիչ, ողբերգական կերպար է գերմանացի սպա՝ հարյուրապետ Օտո Էռլմանի մարդկային անաչառ նկարագիրը, վարքագծի արձանագրումը, նրա տանջահար հոգու նուրբ վերլուծությունը: Այս ամենի կողքին երևում է նաև ինքը՝ պատմողը, ով, վտանգելով կյանքը, փորձում է ամեն կերպ օգնել իր հայրենակիցներին:

Սույն հուշագրության ընթերցողը տեղահանված հայ ժողովրդի սրտակեղեք, սարսափների բազմաթիվ իրական պատկերների կողքին հնարավորություն ունի նաև հիանալ ռեալիստ հոգեբան-արվեստագետ Ջ. Եսայանի գրելառձի առինքնող հմայքով, որում, նկատենք, գերիշխում է նատուրալիստական նկարագրությունը:

Ակամայից մտաբերում ես գերմանացի բանաստեղծ, հրապարակախոս, իրավագիտության դոկտոր, մեծ մարդասեր ու հայասեր Արմին Վեգների՝ հայ ժողովրդին Միջագետքի անապատներ տեղահանելու առնչությամբ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին 1919 թ. հունվարին ուղղած Բաց նամակի հետևյալ տողերը. «Ահա այդպես նրանք ընկան՝ քրդերի ձեռքով խփված, ասկյարներից կողոպտված, գնդակահարված, կախաղան հանված, թունավորված, դաշունահարված, խեղդված, ծարավի, համաճարակների գոհր դարձած, ջրերում խեղդամահ արված, ցրտից կուչ եկած, սովահար, հյուծված, բորենիներին կեր դարձած: Երեխաները մահանում էին արտասովելուց, տղամարդիկ իրենց ժայռերին էին զարկում, մայրերն իրենց երեխաներին ջրերն էին նետում, հղի կանայք, ձեռք ձեռքի տված, երգելով Եփրատն էին նետվում: ... Ես խելագարվածների եմ հանդիպել, որոնք կերել են իրենց արտաթորանքը, կանանց եմ հանդիպել, որոնք իրենց նորածիններին եփել են, աղջիկներ եմ տեսել, որոնք իրենց մահացած մոր տաք դիակն են պատառոտել, նրա կուլ տված ոսկին աղիքների մեջ փնտրելու՝ ջարդարար պահակների ու ասկյարների ձեռքից փրկվելու համար: Նրանք իջևանատների քարուքանդ փլատակների մեջ անտարբերության մատնված, ընկած էին կիսաքայքայված դիակների կույտերի վրա՝ սպասելով սեփական մահվանը: Բայց որքա՞ն կարող էին նրանք իրենց գոյությունը պահել՝ ձիերի աղբերի մեջ հատիկներ որոնելով կամ խոտ ուտելով: Այս բոլորը սակայն, մի աննշան մասն է իմ աչքով տեսածների, ծանոթների կամ ճամփորդների պատմածների և կամ փախստականների բերանից իմ լսած վկայությունների»¹²: «Berliner Tagesblatt» օրաթերթում հրապարակված այդ նամակի անզերեն լեզվով

¹² Ա. Թ. Վեգներ. Խղձիս ձայնը երբեք չի լռելու (Գերմաներեն բնագրից թարգմանեց Խաչիկ Խաչերը), Երևան, 2006, էջ 11:

օրինակը Փարիզի Խաղաղության բանակցությունների ժամանակ հանձնվել է ԱՄՆ-ի նախագահին:

... Առայսօր ոչ միայն լայն հանրությանը, այլև գիտական շրջաններին քիչ ծանոթ Ձ. Եսայանի վերոհիշյալ արժեքավոր հուշագրությունը¹³ Միջազգետքի արաբական անապատներ արքայական հայության կրած տառապանքների մասին եղած առաջին վկայություններից է¹⁴: Այն ոչ միայն ճշմարտացիորեն ներկայացնում է հայ ժողովրդի մի հատվածի արքայի ու սպանդի պատմությունը, այլև իր փաստավավերագրական կարևոր արժեքով հաստատում և համալրում է Հայոց Մեծ եղեռնի բազմաթիվ ականատես վերապրողների հաղորդած մանրամասների իսկությունն ու անաչառությունը: Նաև արձանագրում է արդիական հնչողություն ունեցող գրողի հետևյալ խոսքերը. “Հաստատ կերպով կարելի է րսել. պատերազմի այս տիեզերական սարսափներուն մէջ, երբ աշխարհիս գրեթէ ամեն կողմերը մարդոց զգացումները բթացած են ամենօրեայ դժբախտութիւններու առթած ճնցումներէն, հայ ժողովուրդի տառապանքը այսու ամենայնիս հանգամանքը ունի զարմացնելու համայն մարդկութիւնը և սոսկումով ու զարհուրանքով դղրդելու անոր խղճմտանքը:

Միայն թիրաքը կարող էր այդ առաջնութիւնը վայելել մեր ժամանակի արիւնտ տարիներուն մէջ, որովհետև ոճիրը միակ բանն է, որուն մէջ անմրցելի կա-

¹³ Ի դեպ, “Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջազգետքի մէջ)” նյութի մասին մեր իրականության մէջ փոքր-ինչ ծավալուն խոսք է եղել անվանի գրականագետ Ս. Արզումանյանի “Զապել Եսայան (Կյանքը և գործը)” մենագրության մէջ (էջ 184–186): Հուշագրությունը մեր կողմից վերահրատարակվել է “Պատմաբանասիրական հանդեսի” 2017 թ. համարներում (տե՛ս -1, էջ 136–175, -2, էջ 211–244, -3, էջ 194–224):

¹⁴ Հարկ է նկատել, որ արդեն իսկ 1916 թ. մամուլի տարբեր օրգաններում նյութեր են տպագրվում, անձնական տպավորություններ հաղորդվում Միջազգետք արքայական հայերի օրհասական վիճակի, “դրսի” օժանդակությամբ նրանց օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտության մասին, և դա համարվում է “սուրբ գործ”: Մասնավորապես, “Արև” թերթի 1916 թ. օգոստոսյան համարներում տպագրվել է Ս. Արաբատյանի “Միջազգետքում (Ականատեսի օրատեսրից)” հոդվածաշարը՝ ահա այսպիսի խոսուն վերնագրերով. “I. Նախօրեակին” (11. VIII. 1916), “II. Կիլիկիայի տեղահանութիւնը” (12. VIII. 1916), “III. Հայաստանի դէպքերը” (14. VIII. 1916), “IV. Հայաստանի դէպքերը” (18. VIII. 1916), “V. Դէպքեր ու դէմքեր” (20. VIII. 1916), “VI. “Նոր Հայաստան” (21. VIII. 1916), “VII. Հալէպի դերը.– Եզրակացութիւն” (25. VIII. 1916): Հոդվածաշարում զետեղված է Միջազգետքի մանրամասն քարտեզ՝ “ցոյց տալու համար, թէ որտեղ է ապրում արքայական հայութիւնը”: Զժավալվելով՝ նկատենք, որ Ձ. Եսայանը քաջածանոթ է եղել այս հոդվածաշարին ու դրանից բազում մանրամասներ է օգտագործել “Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջազգետքի մէջ)” գործում:

րող էր մնալ անիկա: Ոճիրը իր բոլոր քստմենելի կատարելություններով և դիւային նրբություններով միակ մշակուած ու կատարելագործուած ընդունակությունն է, որ այդ չարաբաստիկ ցեղը կուտայ իբր պտուղ, իբր արդինք իր ազգային ոգին¹⁵:

“Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)” գործը միակ պատմությունը չէ հայերի զանգվածային տեղահանությունների, արքայի և կոտորածների մասին, որ գրի է առել Չ. Եսայանը (այդ մասին նա, ինչպես տեսանք, հաղորդում է վերը նշված նամակներից մեկում): 1915 թ. Սեբաստիայի նահանգում էլ են սկսվում համանման իրադարձությունները: Հայ ազգային-ազատագրական պայքարի պայծառ դեմքերից հայտնի դաշնակցական խմբապետ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), ականատես լինելով այդ ողբերգական դեպքերին, հայրենակիցների ծանր վիճակին, իր խմբով բարձրանում է լեռները, անցնում անտառներով ու կիրճերով, դուրս գալիս Սև ծովի ափ, գրավում թուրքական մի ձկնորսանավ և ուղղություն վերցնում դեպի Բաթում: Չ. Եսայանը, օգտվելով մի շարք սկզբնաղբյուրներից, դրանց հիման վրա ստեղծում է “Մուրադի ճամբորդությունը: Սվազեն Պաթում” ուղեգրությունը, որտեղ նկարագրում է Մուրադի ճամփորդության մանրամասներն ու տպագրում դարձյալ “Գործ” ամսագրում¹⁶:

Չ. Եսայանի “Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)” նյութը և “Մուրադի ճամբորդությունը Սվազեն Պաթում” ուղեգրությունը վերջին կես դարում համաշխարհային գրականության մեջ գերիշխող “վկայության գրականության” բացառիկ ու անկրկնելի նմուշներից են:

... 1917 թ. հուլիսի 9-ին Պյատիգորսկից Ա. Չոպանյանին ուղղած նամակում Չ. Եսայանը գրում է. “Այս միջոցին ես կը գտնվիմ հանքային ջուրերը, ուր մինչև օգոստոս 15 պիտի մնամ քիչ մը կազդուրվելու և խնամելու համար երիկամունքի հիվանդությունս, որ ամբողջ տարին զիս անհանգիստ ըրավ¹⁷: Անմիջապես հե-

¹⁵ “Գործ”, 1917, - 2, էջ 80:

¹⁶ Նույն տեղում, -4, էջ 71-92, - 5-6, էջ 87-104, -7-8, էջ 89-132: Հետագայում՝ 1920 թ., ուղեգրությունն առանձին գրքույկով լույս է տեսնում Բոստոնում, 1981 թ.՝ “Նաիրի” ամսագրի (Հալեպ, Բեյրութ) էջերում: Դրա ստեղծման մանրամասների մասին տե՛ս Չ. Եսայան. Մուրադի ճամբորդությունը: Սվազեն Պաթում (ուղեգրություն՝ ականատեսի վկայությամբ): Կազմ. Ս. Ս. Գրիգորյանը, առաջաբանը՝ Ս. Ս. Սահակյանի, Երևան, 1990, էջ 7-10:

¹⁷ Կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ Ա. Մանուկյանը “Դրվագներ Հովհ. Թումանյանի կյանքից” վերնագրով իր հուշերում գրում է. “1917 թվականի ամառն է: Պյատիգորսկի “Провал” կոչված առողջարանում ենք, որ հիմնել էր բժ. Բուդոլդյանը և նվիրել Հայ ուսուցիչների միության: Այստեղ հանգստանում և բուժվում էին այն

տո պիտի վերադառնամ Բաքու և պիտի զբաղիմ դասավորելու այն բոլոր վկայությունները և վավերական տեղեկությունները, զորս հավաքած է “Վշտապատում” հանձնախումբը”¹⁸: Ի դեպ, այս հանձնախմբի մեջ էր նաև ֆրանսիացի հրապարակախոս ու լրագրող Հանրի Բարբին, ով Ռուսաստանում “Le Journal” - ֆրանսիական թերթի սեփական թղթակիցն էր և 1917 թ. գտնվում էր Բաքվում: Չ. Եսայանի հետ նա Բաքվի “Մետրոպոլ” հյուրանոցում “օրական գոնե 2 ժամ” աշխատում էր հայկական կոտորածների մասին նյութեր ձեռք բերելու ուղղությամբ: Այնուհետև դրանք թարգմանաբար տպագրում էր ֆրանսիական մամուլում: Մինչ այդ՝ 1916 թ. գարնանից, Հ. Բարբին, լինելով Կովկասյան ռազմաճակատում, շրջագայել էր Արևմտյան Հայաստանում, ականատես եղել Հայոց ցեղասպանության հետևանքներին և իր տեսածի հիման վրա գրել “Մարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան” վերնագրով գիրքը (հրատարակվել է 1919 թ. Կ. Պոլսում):

1917 թ. դեկտեմբերի 8-ին Բաքվից Փարիզ՝ դարձյալ Ա. Չոպանյանին գրած նամակում Չ. Եսայանը հայտնում է. “... զբաղած եմ դասավորելով այն բոլոր

ժամանակվա ուսուցիչներից և հասարակական գործիչներից շատերը: Հյուր էին և արտասահմանից եկած գրական գործիչներ Չապել Եսայանը, Ռուբեն Չարդարյանի որդի, երիտասարդ բանաստեղծ Ռաֆայել Չարդարյանը: Այնտեղ էր և Հովհ. Թումանյանը իր աղջիկների հետ: Ժամանակն անցնում էր շատ հետաքրքրական և ուրախ: ... – Լսեցե՛ք, – ասաց նա (Թումանյանը – Ա. Չ.) մի օր մեզ իր տանը: – Էսօր հայոց դպրոցում ժողով էր: Առողջարանը 4000 ռուբլի բանկին պարտք ունի:

Որոշվեց մի երեկույթ կազմակերպել և այդ պարտքը ծածկել:

– Ազա՛տ, – դարձավ նա ինձ, – քառաձայն խումբը դու պետք է պատրաստես: Դե՛, քեզ տեսնեմ, այսօրվանից անցիր գործի: Եթե կուզես, մենք էլ կերգենք, ես՝ տենոր, տիկին Չապելը՝ առաջին ձայն:

Բոլորս ծիծաղեցինք Հովհաննեսի տենոր երգելու հայտարարության վրա՝ (“Թումանյանը ժամանակակիցների հուշերում”, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց՝ Լ. Մ. Կարապետյան, Երևան, 1969, էջ 515–516): Այդ “ճոխ” երեկույթը, ապա ճաշկերույթը տեղի է ունեցել օգոստոսի 3-ին՝ Պյատիգորսկի քաղաքային ժողովարանի դահլիճում: Ի դեպ, մասնակիցների թվում է եղել նաև զորավար Անդրանիկը, ռուս նշանավոր բանաստեղծ Կ. Բալմոնտը, որը էլույթ է ունեցել, ապա հանպատրաստից Թումանյանին նվիրել իր հայտնի բանաստեղծությունը:

Նկատենք նաև, որ Չ. Եսայանն “անձնական հուշերում” գրում է՝ իր “գիտակցական հարաբերությունները” Թումանյանի հետ “... սկսած կը համարեմ 1916 թ. փետրվարից: ... Իմ առաջին տպավորությունները այդ մեծ պոետեն գլխավորապես կը կայանան այն բանին մեջ, որ կը զգայի իր պաշտպանությունը, իր հովանավորությունը և սրտացավությունը, որոնք միշտ շնորհել է ինձ ինքնաբերաբար” (նույն տեղում, էջ 151):

¹⁸ Չ. Եսայան. Նամակներ, էջ 141:

վավերաթուղթերը և վկայությունները, որ մեզ հասած են Թրքահայաստանի վերջին հալածանքներու մասին: Ըստ ինքյան սաստիկ տաժանելի աշխատություն, որի հետևանքով ջղային դրությունս բոլորովին խանգարված է և, որը, սակայն, ի գին ամեն բանի, պիտի հասցնեմ մինչև վերջը: Դասավորում եմ, հետո մտադիր եմ պատրաստել ընդհանուր ուսումնասիրություն մը, որը հավանաբար երևա “Գործ” ամսաթերթին մեջ, եթե ողջ մնանք”¹⁹:

... Զ. Եսայանը 1918 թ. աշնանը՝ Բաքուն թուրքերի կողմից գրավվելուց հետո, մեկնել է Թեհրան, այնտեղից՝ Փարիզ, այնուհետև շուրջ երեք տարի շրջագայել է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, և ինչպես ինքն է գրում Ա. Չոպանյանին 1920 թ. մայիսի 14-ին՝ “Ես իմ վրաս առեր եմ որբերու և տարագիրներու փրկության գործը...”²⁰: Այդ ընթացքում պատրաստել է 11 էջանոց զեկույց, որտեղ նկարագրվում են 1915-ին ու դրանից հետո հայ կանանց և աղջիկներին “պատուհասած դժբախտությունները”: Այդ զեկույցը 1919 թ. նեկայացվել է Փարիզի Խաղաղության վեհաժողովում հայկական պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշային²¹: Նույն թվականին Զ. Եսայանը “Հայ ժողովրդի վաս-

¹⁹ Նույն տեղում, էջ 146:

²⁰ Նույն տեղում, էջ 162:

²¹ “Ակօս” (Ստամբուլ) թերթի 2014 թ. օգոստոսի 29-ին “Փարիզի մեջ Հայոց ցեղասպանութեան մասին Զապել Եսայեանի փաստաթուղթը յայտնաբերուեցաւ” վերնագրով նյութում հաղորդվում է. “Թուրք պատմաբան Ումիթ Քուրթը եւ լրագրող Ալեւ Էրը, Փարիզի Նուպարեան գրադարանին մեջ կատարած ուսումնասիրութիւններու ընթացքին յայտնաբերած են ցեղասպանութեան մասին վկայող փաստաթուղթ մը: Անոնց կարծիքով այդ փաստաթուղթը մինչեւ օրս հրատարակուած չէ:

Այս կարեւոր փաստաթուղթը կը վերաբերի գրագէտ Զապել Եսայեանի 11 էջանոց զեկույցին, որուն մեջ հեղինակը ներկայացուցած է 1915-ին եւ անկէ ետք հայ կիներուն եւ աղջիկներուն պատուհասած դժբախտութիւնները: Ըստ “Ակօս” թերթին՝ այդ զեկույցը ներկայացուած է Փարիզի Խաղաղութեան խորհրդաժողովի հայկական պատուիրակութեան անդամ Պողոս Նուպար Փաշային: Վերջինս զեկույցը փոխանցած է խորհրդաժողովին մասնակից երկիրներու ներկայացուցիչներուն:

Զապել Եսայեանը զեկույցին մեջ կը նշէ, որ երիտթրքական իշխանութիւնները պատերազմը սկսելէ անմիջապէս ետք ծրագրուած ձեռնարկներով իրականացուցած են երկրի ոչ իսլամ ազգերու ոչնչացումը: Երիտասարդ կիներուն, աղջիկներուն եւ երեխաներուն կտուրանգէին: Ըստ Եսայեանի՝ անոնց թիւը այդ օրերուն աւելի քան 200 հազար էր:

Եսայեանը առանձին կէտերով ներկայացուցած է, թէ ինչպէս թուրքերը կտուրանգէին հայ կիներն ու երեխաները:

1. – Կիներու մէկ մասին կտուրանգէին իրենց քաղաքներէն եւ գիւղերէն: Էրզրումի մեջ թուրք սպաները կտուրանգէին քաղաքի երեւելի հայերու աղջիկները, իսկ Երզնկայի մեջ՝ հարուստ ընտանիքներու աղջիկներուն:

տակը պատերազմի ընթացքում” վերնագրով հողված է տպագրել Կահիրեի հայկական թերթում²²: 1920 թ. էլ Ադանայից Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին զեկուցագիր է ուղարկել Կիլիկիայի հայության դրության մասին²³:

Ձ. Եսայանի՝ վերը մասամբ թվարկված հայրենասիրական գործունեության անկեղծ գնահատությունն էր, ինչպես գրում է անվանի գրականագետ Ս. Արզումանյանը, “1919 թ. հունվարի 5-ին, Կահիրեում, նրա պատվին կազմակերպված մի հավաքություն ամենքի զգացումներն արտահայտող “Տիկին Չապել Եսայանին” ձոն-բանաստեղծության (հեղինակ Մարտիրոս Տեր-Սահակյան. – Ա. Ձ.) հրապարակումը.

Իր սրբտին մեջ վերքը անոնց, որ ցանուցիր ման կուգան
Աչքերն իրենց դեռ թունդ կարմիր՝ ցուքը ծրծած հայ արյան,
Անվերապահ նվիրումի ճամբուն վրբա անկայուն,
Ես կողջունեմ՝ նրժեհ Քույրը տիկին Չապել Եսայան:

Հերոսական կրոնիվներու պերճակզու պատմաբան,
Տարբերու դեմ պայքարումի ընտրած փշոտ իր ճամփան,
Կապանքներու հանդեպ ըմբոստ, զուլումին դեմ ախոյան,
Ես կողջունեմ՝ հերոսուհին տիկին Չապել Եսայան:

Վիշտերու մեծ ուղիներեն դեպի դաժան գողգոթան
Հայր-մայր անուն տառապանքին՝ դեղ ճարելու և դարման,
Թափառումին հանդեպ համառ, ձագուկն իրմե անբաժան,

2. – Հայ կիներն ու երեխաները կ’առեւանգուէին յատկապէս հայ տղամարդիկը սպանելէ ետք: Ոստիկանները, որոնք կ’ողեկցէին կիներու խումբերուն, տաժանագին ճանապարհորդութենէ ետք խումբը կը բերէին աղբիւրի մը մօտ, սակայն մօտենալ եւ ջուր խմել կ’արգիլէին: Ջուր խմելու գինը՝ թուրք զինուորներուն յանձնուիլն ու կիրքերուն գոհացում տալն էր:

3. – Երբ այդ կիները կը հասնէին հաւաքավայր, անոնց վրայ կը յարձակէին քիւրտերը, չերքեզներն ու չեչենները:

Ումիթ Քուրթ եւ Ալեւ Էր կը յայտնեն նաեւ, որ Եսայեանի զեկույցը յանձնուած է նաեւ Պոլսոյ հայոց պատրիարք Առաքել Չաքրեանի գլխաւորութեամբ ստեղծուած յանձնաժողովին, որ կը զբաղէր որք հայ երեխաներ եւ այրի կիներ գտնելու հարցով” (<http://hairenikweekly.com/2014/08/29/19117>):

²² “Наше время” (Баку), 23. III. 1919.

²³ Ա. Ա. Ավետիսյան. Չապել Եսայանը Կիլիկիայի հայության դրության մասին (1920 թ.). – “Պատմա-բանասիրական հանդես”, 1985, - 2, էջ 226–233:

Ես կողջունեմ սրտոտ մայրը տիկին Զապել Եսայան:

*Երբ հայ մըտքի պերճ արևներ մեզ հառաչանք սուկ դարձան,
Իրենց սուգը՝ հայ տաղանդը դատապարտեց լռության,
Թուղթը թողած՝ քարոզ դարձած, հրմայքին մեջ դյութական,
Ես կողջունեմ զըրագետը տիկին Զապել Եսայան:*

Արվեստով ոչ կատարյալ, բայց խորապես անկեղծ այս բանաստեղծությունը, ներբողային հյուսվածքով, Զապել Եսայանի հերոսական բնավորության ճշմարտացի արձագանքն էր²⁴:

... 1921 թ. Զ. Եսայանը բնակվում էր Փարիզում: Նա Հայաստանի օգնության կոմիտեի, Խորհրդային Հայաստանի հետ սերտ կապեր պահպանող հայկական ընկերությունների ակտիվ անդամներից էր, հեռվից մասնակցում էր հանրապետության մշակութային կյանքին: 1926 թ. հոկտեմբերին Զ. Եսայանն այցելում է Մոսկվա, նոյեմբերին՝ Խորհրդային Հայաստան, որտեղ մնում է չորս ամիս: Լինում է նաև Բաքվում, Լեռնային Ղարաբաղում: «Խորհրդային Հայաստան», Փարիզի «Երևան» ու այլ պարբերականներում հրատարակում է իր տպավորությունները ճամփորդության մասին, այնուհետև դրանք ի մի է բերում և 1928 թ. հրատարակում «Պրոմեթեոս ազատագրված» ընդարձակ ժողովածուն: 1933 թ. ապրիլի 19-ին Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով անվանի գրողն ընդմիջոտ գալիս է Երևան: «Ապրիլի 19-ին Երևան ժամանեց հայտնի գրագիտուհի Զ. Եսայանը: Վերջին տարիներս Եսայանը, Ավետիք Բսահակյանի հետ միասին, գնահատելի աշխատանք է կատարել գաղութահայ աշխատավորության մեջ, մասսայականացնելով Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարությունը ... հանդիսանալով Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի անկեղծ և ակտիվ բարեկամ մտավորականներից մեկը, – կարդում ենք «Գրական թերթ»-ում տպագրված «Զապել Եսայանի գալուստը» հաղորդագրության մեջ: – Եսայանը եկել է վերջնականապես հաստատվելու և աշխատելու Խորհրդային Հայաստանում²⁵: Նա աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանում, որտեղ դասավանդում է արևմտաեվրոպական գրականություն: 1934 թ. Մոսկվայում մասնակցում է ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարին, ֆրանսերենով ելույթ ունենում:

1934 թ. Զ. Եսայանը հրատարակում է «Կրակե շապիկ» վիպակը (1936-ին թարգմանվում է ռուսերեն և ադրբեջաներեն), 1935 թ. լույս է տեսնում «Միլիտարի պարտեզները» վեպ - հուշագրության առաջին գիրքը: 1936-ին նա ավար-

²⁴ Ս. Արզումանյան. Զապել Եսայան (Կյանքը և գործը), էջ 188–189:

²⁵ «Գրական թերթ», 21. IV. 1933:

տում է «Բարբա Խաչիկ» վեպը և մի քանի գլուխ տպագրում մամուլում: 1937 թ. հրատարակվում է գրողի «Երկեր»-ի լիակատար ժողովածուն:

1937 թ. Ձ. Եսայանը, հայ մեծանուն գործիչներից շատերի պես, դարձել է անհատի պաշտամունքի զոհ, ձերբակալվել է, նետվել Բաքվի բանտ: Մահացել է 1943 թ.:

Ձ. Եսայանի կյանքի, գործունեության և գրական մեծարժեք ժառանգության մասին, ինչպես վերն ասվեց, գրվել են գրքեր, տպագրվել հոդվածներ, եղել են հրապարակումներ: 1978 թ. նշվել է Ձ. Եսայանի ծննդյան 100-ամյակը: Վերջին տարիներին էլ նրա անվան հետ կապված բազմաթիվ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել: Հիշատակենք դրանցից մի քանիսը:

«Ազգ» օրաթերթում 2009 թ. տպագրված «Զապել Եսայանին գտնելով» վերնագրով ծավալուն նյութի տակ կարդում ենք. «20-րդ դարասկզբի արևմտահայ կին գրող Զապել Եսայանի կյանքն ու ստեղծագործությունն է ներկայացնում լրագրող Թալին Մանճյանի և Կանանց ռեսուրսային կենտրոնի տնօրեն Լարա Ահարոնյանի նախաձեռնությամբ, անձնական միջոցներով և կենտրոնի աջակցությամբ նկարահանված ֆիլմը, որի առաջին ցուցադրությունը տեղի ունեցավ տիկնիկային թատրոնի կինոսրահում՝ կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի նախօրեին: Ֆիլմի նկարահանումները (Երևան, Պոլիս) սկսել են անցած տարվա ձմռանը, գրողի 135-ամյակի (130-ամյակի.– Ս. Ձ.) առիթով:

Ֆիլմի առաջին կադրերը փողոցային հարցումներ են՝ Զապել Եսայանի ինքնության մասին, պարզ մարդկանց շրջանակում: Ինչպես և սպասելի էր, նրա անունը ծանոթ չէր հարցվողներից և ոչ մեկին: Ի դեպ, Զապել Եսայանը գրեթե ճանաչված չէ մտավորական, կարելի է ասել նաև գրական շրջանակներում՝ չնայած խորհրդային տարիներին նրա գրական երկերի բավական հրատարակությունների: Այս առումով ֆիլմը նախևառաջ ճանաչողական նշանակություն ունի:

Ֆիլմի հեղինակները կարողացել են որոշակիորեն ամբողջացնել 20-րդ դարասկզբի արևմտահայ տաղանդավոր կին գրողի ստեղծագործական, առավել ևս՝ նրա քաղաքացիական-ազգային, մարդկային նկարագիրը՝ որպես սկզբունքային, տոկուն, կարելի է ասել հերոսական: Նրա անցած ճանապարհը անհանգիստ, հանրային կյանքի հանդեպ ակտիվ վերաբերմունքով մտավորական կնոջ կյանքային էպոպեա է՝ ամենատարբեր դժվարություններով, վտանգավոր հանգրվաններով, և, ցավոք, եղերական ավարտով:

... Ֆիլմում Ձ. Եսայանի կենսագրությունը ներկայացնող հեղինակային տեքստում անդրադարձ է արվում նրա կովկասյան այցին, Անդրանիկի, Հովհ. Թումանյանի հետ ծանոթությանը, աշխարհայացքային փոփոխություններին:

1933-ին գրողի տեղափոխությունը Սովետական Հայաստան ճակատագրական եղավ. աշխատանքի հրավեր ստացավ Երևանի պետական համալսարանից: Ժամանակաշրջանը համընկավ սովետական ամենամոռայլ ու մարդատյաց ստալինյան բռնապետության տարիներին: 1936 թ. գրողների միությունում իր ելույթին հաջորդում է այդ տարիներին զանգվածային դարձած չարագուշակ երևույթը՝ չսպասված ժամին դռան թակոցը, ապա և ձերբակալությունը: Ֆիլմում հնչող Բաքվի բանտից գրողի գրած նամակների հատվածները խոսուն են՝ նույն տոկուն, խիզախ կեցվածքը: Նրա կյանքի դրամատիկական ավարտը՝ ողբերգական մահվան հանգամանքները մինչ այժմ անհայտ են:

Ֆիլմում Զապել Եսայանը բացահայտված է ավելի որպես ֆեմինիստական շարժման կրող, կնոջ իրավունքներին հետամուտ գրող: Անդրադարձ է արված հիմնական ստեղծագործություններին՝ «Ավերակներուն մեջ», «Միլիտարի պարտեզները»՝ երիտասարդ արվեստարան Վարդան Ազատյանի մեկնաբանությամբ:

Ֆիլմը հետաքրքրական են դարձնում արխիվային նյութերի, գրողի նամակների, ժամանակակիցների հուշերի հրապարակումները. անձնական կյանքին վերաբերող մանրամասներ է պատմում ռադիոլրագրող Կլարա Թերգյանը: ... Տպավորիչ ու պատկերավոր էր ֆրանսահայ գրականագետ Մարկ Նշանյանի խոսքը:

Հեղինակները մտադրություն ունեն ֆիլմը DVD-ներով տարածել, ցուցադրել սփյուռքահայ, նաև թուրքահայ համայնքներում²⁶:

Ի դեպ, այս ֆիլմը 2014 թ. օգոստոսին ցուցադրվել է Ստամբուլի Շիշլի թաղամասի կինոթատրոնում: Հաղորդվում է, որ «Պոլսոյ Շիշլի թաղամասի շարժապատկերի սրահի մը մեջ, վերջերս ցուցադրուեցաւ 20րդ դարու հայ ականաւոր կին մտածողներէն Զապել Եսայեանի կեանքի մասին պատմող «Գտնել Զապել Եսայեանը» վաւերագրական ժապաւէնը: Թալին Սուճեանի (Մանճյանի. – Ա. Զ.) կողմէ պատրաստուած ժապաւէնը ներկայացուած է «1908–1909 Դեսադոնիկէն Ատանա յոյսեր եւ անկումներ», ցուցահանդէսի ծիրին մեջ:

Ժապաւէնին մեջ ներկայացուած են Եսայեանի կեանքի կարելոր դրուագներ՝ Պոլսոյ մեջ անցուցած մանկութիւնն ու պատանեկութիւնը, ուսանողական տարիները Փարիզի մեջ, ամուսնութիւնը, երեխաները, անոր աշխատանքը 1909ի Ատանայի կոտորածները ուսումնասիրող խումբին մեջ, 1915ին Հայոց Ցեղասպանութիւնէ փախուստը, Կովկասի եւ Միջին Արեւելքի մեջ Ցեղասպանութիւնէն ետք հաւաքուած որբերու եւ վերապրածներու յիշողութիւններու գրառումը, այնուհետեւ Խորհրդային Միութիւն մուտք գործելը, աքսորը սթալինեան ռեժիմի

²⁶ «Ազգ» (Երևան), 11. III. 2009:

կողմէ եւ անյայտ պայմաններու մէջ մահը: Ժապաւէնին մէջ օգտագործուած են Եսայեանի ընտանիքի անդամներու յուշերը, անոր գրութիւնները, գրաքննադատական մեկնաբանութիւններ, պետական արխիւային նիւթեր, ինչպէս նաեւ ձայնագրութիւններ եւ լուսանկարներ²⁷:

2011 թ. դեկտեմբերի 1-ի մի լրահոսի՝ «Տոքթ. Մարկ Նշանեանի դասախօսութիւնը՝ Զապէլ Եսայեանի «Ժողովուրդի մը Հոգեվարքը» գիրքին մասին» վերնագրով նյութից տեղեկանում ենք. «Կիրակի Նոյեմբեր 6-ին Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Նիւ Ըրրզիի Մասնաճիւղը՝ կազմակերպեց դասախօսական ձեռնարկ մը, որ տեղի ունեցաւ Սուրբ Վարդանանց եկեղեցոյ ներքնասրահին մէջ, եկեղեցոյ արարողութեան ւաւարտին:

Օրուան դասախօսն էր հանրաձանօթ գրագէտ, քաղաքագէտ եւ փիլիսոփայ տոքթ. Մարկ Նշանեան էր Զապէլ Եսայեանի «Ժողովուրդի մը Հոգեվարքը» գիրքին մասին:

Տոքթ. Նշանեան վերլուծեց այս գրութիւնը, որ Հայկ Թորոյեանի ականատեսութիւնն է հոգեվարք գաղթականներուն իր ճամբորդութեան ընթացքին դէպի Իրաք: Ըստ կատարուած հետազոտութեան այս գիրքը միայն գրի առած է Զապէլ Եսայեան կամ իր արձանագրութիւններն են Հայկ Թորոյեանի պատմածին:

Ներկայ էին այս ձեռնարկին գաղութի տարբեր շրջաններէն մշակութասէր եւ գրասէր յիսուն անձնաւորութիւններ, որոնք մտերմիկ մթնոլորտի մը մէջ հետաքրքրութեամբ հետեւեցան դասախօսին: Դասախօսութեան ւաւարտին ներկաները քննարկեցին եւ խօսեցան նիւթին մասին...: Յաջող եւ հոգեպարար դասախօսական ձեռնարկ մըն էր որ գոհունակութիւն տուաւ ներկաներուն²⁸:

Նկատենք՝ հենց Մ. Նշանյանն էլ 2013 թ. այս հուշագրութիւնը թարգմանել է ֆրանսերէն: «Nouvelles d'Arménie»-ն հաղորդում է. «Ֆրանսիայում լույս է տեսել 1917 թ. հրատարակված «Ժողովուրդի մը հոգեվարքը» գրքի թարգմանությունը, որի հեղինակը Հայոց ցեղասպանության ականատես Հայկ Թորոյանն է, ով թարգմանիչ էր աշխատում Գերմանիայի (գերմանացի սպա՝ հարյուրապետ Օտտ Էոլմանի. – Ա. Զ.) մոտ իր ծառայության ընթացքում, իսկ նրա պատմածը գրի է առել Զաբէլ Եսայանը: ... Գիրքը ֆրանսերէն է թարգմանել Մարկ Նշանյանը:

Գրքի հրատարակման առիթով ֆրանսիական «Le Monde» թերթը գրել է. «Ներկայումս, թեպետ Հայոց ցեղասպանությունը Ֆրանսիայի կողմից ճանաչվել է 2001 թ., օրենքը դեռևս չի պատժում դրա ժխտումը, չնայած կա 2011 թ. օրենքի նախագիծը: Պատճառն ա՛յն է, որ մեզ չեն բավարարում ապացույցները: Բնավ, ոչ»:

²⁷ Տե՛ս <http://hairenikweekly.com/2014/08/29/19117>.

²⁸ Տե՛ս <http://hairenikweekly.com/2011/12/01/8351>.

Տրանսիական թերթի համաձայն, այդ գրքում վկաների խոսքերը նախորդում են պատմական ցանկացած ուսումնասիրության: «Ժողովուրդի մը հոգեվարքի» հրապարակումը բացառիկ է նաև մեկ այլ պատճառով. դա պատմություն է, որ երևան է եկել հայկական թերթում 1917 թվականին, որը ոչ այլ ինչ է, քան վերապրածի առաջին ծավալուն վկայություն, և որը երբեք չի թարգմանվել (ինչպես վերը նշվեց, այն ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսել Բաքվում հրատարակվող «ՃՈՔԱ ՉՐԱՎՅ» թերթի 1919 թ. ապրիլ-օգոստոսյան համարներում. – Ա. Զ.)²⁹, – գրել է «Le Monde»-ն:

Տրանսիայի Հանրապետության նախագահ Ֆ. Օլանդի հրավերով պաշտոնական այցով այդ երկրում գտնվելու օրերին՝ 2017 թ. մարտի 8-ին, Փարիզի քաղաքապետ Ա. Իդալգոյի հետ հանդիպումից հետո Փարիզի քաղաքապետարանի «Հանդիսությունների» սրահում ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանն ու քաղաքապետը ելույթներ են ունեցել փարիզահայ համայնքի ներկայացուցիչների առջև: Ա. Իդալգոն, մասնավորապես, ասել է. «...մենք որոշել ենք Փարիզի փողոցներից մեկը վերանվանել Զապել Եսայանի անունով, ով գտնվել է հայ ժողովրդի կրած տառապանքների կիզակետում և խորհրդանշում է այդ բոլոր տառապանքները»³⁰:

Ստամբուլի «Մարմարա» օրաթերթում տպագրվել է «Զապել Եսայեանի կեանքը թուրք բեմին վրայ (Կեանք մը որ կ'երկարի Օսմանեան տարածքաշրջանէն մինչեւ Միպիրիա)» վերնագրով հոդված, որտեղ կարդում ենք. «Ողազիչի Յուցարուեստի Խումբը հանդէս եկաւ թատերախաղի նոր ներկայացումով մը: Այդ ներկայացումը կը պատկանի Հայ ֆեմինիսթ շարժումի առաջատար դէմքերէն՝ Զապել Եսայեանի կեանքին: Թատերախաղը բեմադրուած է Այսել Երլտըրըմի կողմէ: Թատերախաղի բոլոր դերակատարները կիներ են: Երլտըրըմ յայտնած է որ Զապել Եսայեանի կեանքը, որպէս իտէալիսթ յառաջապահ գաղափարներով կին, մեծ ազդեցութիւն գործած է իր վրայ: Ան կը պատմէ որ Զ. Եսայեան եղած է շատ զօրաւոր կին, իր ապրած շրջանին մեծ պայքար մղած է մաքառելով դժուարութիւններու դէմ: Օսմանեան շրջանին Հայ կիներ գործօն դեր ունեցած են ընկերութեան մէջ, որոնց կարգին նշանաւոր դէմք կը հանդիսանայ Զ. Եսայեան, որ

²⁹ www.yerkramas.org (տե՛ս 01. 06. 2013).

³⁰ «Հայաստանի Հանրապետություն», 9. III. 2017: Ի դեպ, «Արմենայրես»-ի հաղորդմամբ, «Կանանց միջազգային օրվա (2018 թ. մարտի 8-ի.– Ա. Զ.) կապակցությամբ Փարիզի Հանրապետության պողոտայի և Տլիմսեն ու Սպինոզա փողոցների (20-րդ և 11-րդ շրջաններ) հատման կետում գտնվող Ճեմուղին անվանակոչվեց հայ կին գրող, մարդու իրավունքների ակտիվիստ Զապել Եսայանի անունով: Ճեմուղին ձգվում է Մենիլոնտան պողոտայի կենտրոնական հատվածով» («Հայաստանի Հանրապետություն», 10. III. 2018):

միաժամանակ շատ նշանաւոր գրագիտուհի է: Ան ո՛չ միայն գրականութեան, այլ քաղաքական կեանքի մէջ առաջատար դէմք մը եղած է: 1915ի սպանդի օրերուն 24 Ապրիլի գիշերը մտաւորականներու համար կազմակերպուած արտոյի ցանկին մէջ միակ կինը որ արձանագրուած է, այդ ալ Չ. Եսայեանն է: Ան հակառակ որ իր անունը արձանագրուած է ցանկին մէջ, միջոցը գտած է խոյս տալու եւ փրկուելու իրեն ճակատագրակից անձերու դէմ գործադրուած մահավճիռէն: Երլտըրըմ կը հայտնէ որ հիմա Չապէլ Եսայեանի ամբողջ կեանքը կը պարզուի բեմին վրայ: Իրեն հետ կեանքի կոչած են նաեւ այն հայ կիները, որոնք տաժանագին պայմաններու տակ ընկերութեան օգտին ծառայած են: Թատերախաղին մէջ կը պատմուի որ Չ. Եսայեան 1915էն ետք ինչպէս յաջողած է նախ Սօֆիա, ապա Թիֆլիս խոյս տալ, յետոյ Կիլիկիա վերադառնալ, հոնկէ Ֆրանսա անցնիլ, վերջապէս Սովետական Միութիւն երթալ եւ հոն Մթալինեան կառավարութեան օրերուն բանտարկութեան ենթարկուելով խորհրդաւոր պայմաններու տակ մահանալ:

Երլտըրըմ կը պատմէ որ Չ. Եսայեանի կեանքի պատմութիւնը ներկայացնելու համար մեծապէս օգտուած է հեղինակի «Միլիտարի պարտէզներ», Ատանայի ջարդերու մասին իր վկայութիւններու՝ «Աւերակներու մէջ» գործերէն:

Բեմադրիչը կը նշէ որ թատերախաղի ներկայացման համար մեծապէս օգտուած է «Արաս» հրատարակչատան կողմէ թրքերէնով հրատարակուած Չ. Եսայեանի գործերէն: Ասոնցմէ մէկն է «Արդարութեան աղաղակ մը» անուն գիրքը, որ Լեոնա Էքմէքճիօղլուի եւ Մելիսա Պիլալի խմբագրութեամբ լոյս տեսաւ 2006 թուականին: Նաեւ Եսայեանի «Աւերակներու մէջ»ը: Օգտուած է նաեւ հեղինակի «Միլիտարի պարտէզները» գիրքէն, որ հրատարակուած է «Պէլկէ» հրատարակչատան կողմէ:

Թատերախաղին անունն է «Չապէլ»:

Երկու վարագոյրով այս թատերախաղը սկսած է բեմադրուիլ 6 Մարտէն սկսեալ³¹:

«Ազգ» օրաթերթը «Հատվածներ Չ. Եսայանի գործերից՝ ամերիկյան գրական տարեգրքում» վերնագրով նյութի տակ հաղորդում է. «Պանգիրուս» (Pangyrus) անվամբ ամերիկյան նոր գրական տարեգրքի (հիմնված 2015-ին միայն առցանց) այս տարվա թվով երրորդ համարում, որ առցանցին զուգահեռ հրատարակվել է նաև տպագիր, ներառվել են նաև հատվածներ հայ անվանի կին գրող, թարգմանիչ և հրապարակագիր Չապէլ Եսայանի (1878–1943) ստեղծագործություններից:

... Քեմբրիջի (Մասաչուսեթս) գրական հանդեսում, որի խմբագիրն է 2003-ից Հարվարդում գրավոր խոսք դասավանդող Գրեգ Հարիսը, հրատարակվել է անգ-

³¹ «Մարմարա» (Ստամբուլ), 11. III. 2017:

լերեն թարգմանությամբ Եսայանի “Իմ տունը” գլուխը “Միլիտարի պարտեզները” վեպ-հուշագրությունից, մի քանի էջ Կիլիկիայի հայության ողբերգությունը նկարագրող նրա “Ավերակներուն մեջ” ականատեսի վկայություններից և “Մարդը” առեղծվածային պատմվածքը նրա “Հոգիս աքսորյալ” վիպակից:

Նյութերը վերցվել են “Հայ կանանց միջազգային ասոցիացիայի” (AIWA) հրատարակած գրքերից, որոնց անգլերեն թարգմանությունը հանձն էին առել Ջուլիա Սարյանը, Բարբարա Մերգերյանը, Դանիելա Թերբանջյանը և Ջոյ Ռենջիլյան-Բուրգին: Օժանդակել էին նրանց Դոկորես Չոհրապ-Լիբման և Գյուլբենկյան հիմնադրամները:

Հատվածներից առաջ “Պանգիրուսը” երկու էջի վրա ներկայացրել է Եսայանի կյանքն ու գործունեությունը և նրա նշանակությունը մեր գրական կյանքում, զետեղելով նաև մի քանի լուսանկարներ³²:

Մեկ այլ լրատվամիջոցի՝ “Զապել Եսայանը աշխարհի անվախ կանանց “հնգյակում” է” վերնագրով հաղորդումից տեղեկանում ենք, որ կանանց ու մոդայի մասին բրիտանական “Corporate 29” հրատարակությունն առանձնացրել է մարդկության պատմության մեջ ամենից անվախ կանանց մասին հինգ պատմություն, որը վերցրել է Հաննա Ջեվելլի “100 անվախ կանայք” խորագրով վերջերս լույս տեսած գրքից: Յուրաքանչյուրը ընդգրկված է նաև Կ. Պոլսի ամենահայտնի հայ գրագիտուհիներից մեկը՝ Զապել Եսայանը, ով “փաստագրել է Օսմանյան կայսրությունում 1915 թ. Հայոց ցեղասպանության սարսափները”³³: Այնուհետև կենսագրական հայտնի որոշ տեղեկություններ են բերվում գրողի մասին:

Զապել Եսայանը ոչ միայն իր գրական, այլև ազգային-հասարակական գործունեությամբ միջոց կմնա հայ ժողովրդի երախտավորների շարքում:

ЗАПЕЛ ЕСАЯН: НАЦИОНАЛЬНО-ОБЩЕСТВЕННЫЙ ДЕЯТЕЛЬ
(К 140-летию со дня рождения)

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Известная армянская писательница, переводчица, публицист, национально-общественный деятель Запел Мкртычевна Есян (Ованнисян) родилась в 1878 г. в Константино-

³² “Ազգ”, 14. VII. 2017 (Գ Ազգ – Մշակույթ): Հավելյալ տեղեկություններ տե՛ս www.pangyrus.com և info@aiwainternational.org կայքերում:

³³ «Новое Время» (Ереван), 7. XI. 2017. Տե՛ս նաև “Республика Армения”, 15. XI. 2017.

поле. Начальное образование получила там же, а в декабре 1895 г. отправилась в Париж, где была слушателем литературных и философских курсов в Сорбонне и Коллеж де Франс. Здесь она сотрудничала с армянскими и французскими периодическими изданиями, писала статьи, рассказы, повести, занималась переводами. До 1915 г. попеременно жила и творила в Париже и Константинополе. В 1905–1907 гг. опубликовала повести «Вечерняя заря Скютари», «Фальшивые таланты», «Даровитые люди» и т. д. В 1909 г., после младотурецких погромов в Адане, З. Есяян в течение трех месяцев побывала в Адане, Мерсине, Сисе, Османие и в других населенных пунктах, слышала рассказы свидетелей резни, написала статьи, художественные произведения (книга «Среди руин», повесть «Проклятие», рассказы «Сафие», «Новая невеста»).

По счастливой случайности З. Есяян спаслась от Геноцида, переехала в Болгарию, затем в Румынию. В конце 1915 г. приехала на Кавказ. В феврале и марте 1916 г. в Баку и Тифлисе, затем в апреле в Петрограде и Москве читала лекции о западноармянской литературе и писателях, о преследовании армян в Турции. В это же время З. Есяян начинает собирать, записывать материалы о Геноциде армян и публиковать их. В бакинском журнале «Горц» («Дело») за 1917 г. (1 2 и 3; 4, 5–6, 7–8) издает записи очевидца трагических событий – «Агония одного народа (Депортированные армяне в Месопотамии)» и путевые заметки «Воспоминания Мурада».

Осенью 1918 г. З. Есяян отправилась в Тегеран, оттуда – в Париж. Затем, в течение трех лет, посетила страны Ближнего и Среднего Востока, занимаясь спасением и размещением сирот и беженцев.

С 1921 г. З. Есяян живет в Париже. Тесными узами она была связана с Советской Арменией: являлась членом «Комитета помощи Армении», поддерживала связи с интеллигенцией. В октябре 1926 г. писательница впервые побывала в Советском Союзе – в Москве, затем, в ноябре, прибыла в Армению, где провела четыре месяца. По возвращении в Париж, в 1928 г., опубликовала объемный сборник своих впечатлений от поездки – «Освобожденный Прометей».

С апреля 1933 г. по приглашению правительства АрмССР З. Есяян живет и работает в Армении. В 1934 г. она участвует в работе первого съезда Союза писателей СССР, выступив на нем на французском. В эти же годы пишет ряд произведений – «Огненная рубашка» (1934 г.), первую книгу повести «Сады Силизара» (1935 г.), «Барпа Хачик» (1936 г.). В 1937 г. было издано полное собрание сочинений писательницы.

В 1937 г. З. Есяян, как многие видные армянские деятели, стала жертвой культа личности, была арестована и заключена в бакинскую тюрьму. Скончалась в 1943 г.

Не только своей литературной, но и национально-общественной деятельностью З. Есяян стоит в ряду выдающихся представителей армянского народа.

ZABEL YESAYAN: A NATIONAL–PUBLIC FIGURE
(Dedicated to the 140th birth anniversary)

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

Zabel Mkrtych Yesayan (Hovhannisyan), a prominent Armenian writress, translator, publicist and national-public figure was born in 1878 in Constantinople. She received primary education at the same place and in December 1895, left for Paris where she was a course attendee of literature and philosophy at Sorbonne and Collège de France. Here she collaborated with Armenian and French periodicals, wrote articles, novels, essays and did translations. Up to 1915 she alternately lived and acted in Paris and Constantinople. From 1905–1907 she published novels titled “The Evening Twilight of Scutari”, “False Talents”, “Gifted people”, etc. In 1909 after the Adana massacres perpetrated by the Young Turks, Z. Yesayan during three months visited Adana, Mersin, Sis, Osmaniye and other settlements, lettres (the book “Among the Ruins”, the novel “The Curse”, the short stories “Safieh”, “The New Bride”).

Fortunately, Z. Yesayan saved from the Genocide moving to Bulgaria and subsequently to Romania. In the end of 1915 she arrived at the Caucasus. In February and March of 1916 in Baku and Tiflis, later in April in St. Petersburg and Moscow she handled lectures on Western Armenian literature and writers, as well as the persecution of Armenians in Turkey. Simultaneously, Z. Yesayan started to collect, record and publish materials on the Armenian Genocide. During the year of 1917 in Baku journal of “Gorts” (“Deed”) she published the accounts of an eyewitness of tragic events (№ 2 and 3; 4, 5–6, 7–8) – “The Agony of a Nation (The Deported Armenians in Mesopotamia)” and travel notes of “The Reminiscences of Murad”.

In the fall of 1918 Z. Yesayan left for Tehran, from where – to Paris. Then, during the following three years she visited the countries of the Near and Middle East devoting herself to the rescue and relocation of orphans and refugees.

From 1921 Z. Yesayan lived in Paris. She was bound by close ties with Soviet Armenia: she was a member of “Armenian Relief Committee”, kept in touch with the intelligentsia. In October 1926 the writress for the first time visited the Soviet Union – Moscow, subsequently arrived at Armenia in November, where she spent four months. Upon her return to Paris she published “Prometheus Unchained” – a voluminous compilation of her own impressions of the journey.

From April 1933, at the invitation of the Government of ArmSSR, Z. Yesayan lived and worked in Armenia. In 1934 she participated in the activities of the first Soviet Writer’s Union congress making a report in French. In those years she authored a series of works of belles-lettres – “Shirt of Fire” (1934), her first book of novels “The Gardens of Silihdar”

(1935), “Barpa Khachik” (1936). In 1937 the first collected works of the writeress were published.

In 1937, like many other outstanding Armenian figures, Z. Yesayan became one of the victims of the cult of personality, firstly was arrested and then kept at Baku prison. She died in 1943.

Not only with her literature but also for her national-public activities Z. Yesayan is classed among the prominent representatives of Armenian nation.